Կարգապահական գործ թիվ ԿԳ-16063

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 230-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/155-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լիանա Գասպարյանին (արտոնագիր թիվ՝ 1773) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.</u>**

18.03.2016թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի, թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործի շրջանակներում 16.03.2016թ կայացված. «ԴԱՏԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշումը:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

12.04.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 116-Ա/ԿԳ-16063 որոշմամբ՝ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Լիաննա Գասպարյանի նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետերի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 15.03.2015թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Համլետ Ստեփանյանին:

3. **<u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

18.03.2016թ.Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան), թիվ

ԵՇԴ/0125/01/14 քրեական գործի շրջանակներում 16.03.2016թ. կայացված՝ «ԴԱՏԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշումն (այսուհետ՝ Որոշում):

Դատարանը, Որոշման «ՊԱՐԶԵՑԻ» մասում նշել է հետևյալը. *Սույն քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. Մարտի 16-ին, ժամը 15:00-ին նշանակված դատական նիստում, հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանը ներգրավել է վարույթին որպես ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան:*

Դատական նիստի ժամանակ հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանն իր դատավարական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, հայտարարել է, որ ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի համաձայնությունը չունենալու պատճառով նրա պաշտպանությունը ստանձնել չի կարող, որից հետո չենթարկվելով նախագահող դատավորի օրինական կարգադրություններին՝ լքել է դատական նիստերի դահլիճը, ինչով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Դատարանը գտնում է, որ դատական նիստերի դահլիճից հեռանալով փաստաբան Լ.Գասպարյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականությունները, ինչով և խոչընդոտվել է դատական նիստի բնականոն ընթացքին, անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:¦:

Այնուհետև, Դատարանը Որոշման մեջ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314[1] հոդվածի 1-ին մասը, և նույն հոդվածի 7-րդ մասը, որոշել է հետևյալը. «*Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանին /արտոնագիր թիվ 1773/ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:*»:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանող Լիանա Գասպարյանի կողմից Պալատ մուտքագրված բացատրությամբ հայտնվել է հետևյալը. «*ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 2016թ. մարտի 15-ի թիվ 871/16-Ա որոշմամբ թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործը հանձնվել է ինձ, որով դատական նիստը նշանակվել է 2016թ. մարտի 16-ին, ժամը 15:00-ին:*

2016թ. Մարտի 16-ին, ժամը 14:50-ին ներկայացել եմ դատարան:
Դատական նիստերի դահլիճ մուտք գործելուց առաջ, Վարդգես Գասպարին հասկանալով, որ ես եմ ներկայացել որպես հանրային պաշտպան, սկսել է վիրավորաքներ հնչեցնել իմ հասցեին և գոռգոռալ:

Պաշտաճ կարգով ներկայացրել եմ նշանակված դատական նիստին, երբ դատական նիստը հայտարարվել է բացված, օրենքով սահմանված ընթացակարգով, այն է՝ ՀՀ քերական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, ամբաստանյալն իր համաձայնությունը չի տվել որպես նրա պաշտպան հանդես գալուն, այսինքն, տվյալ դեպքում բացակայել է անձի համաձայնությունը հանրային պաշտպան ունենալու մասին: Ավելին, բառացիորեն բազմիցս դատական նիստերի դահլիճում բղավելով, ամբաստանյալը հրաժարվել է հանրային պաշտպանի ծառայությունից, և պահանջել է

հանրային պաշտպանին դուրս գալ ու հեռանալ դատական նիստերի դահլիճից: Այնուհետև, ես հայտարարել եմ, որ նման պայմաններում չեմ կարող իրականացնել Վարդգես Գասպարիի պաշտպանությունը, քանի որ նա չի ցանկանում որպեսզի ես հանդիսանամ նրա պաշտպանը, իսկ նախագահող դատավորն ի պատասխան հայտարարել է, որ իմ մասնակցությունը բխում է արդարադատության շահից, և, որ Դատարանի որոշումը ենթակա չէ քննարկման:…

Դրանից հետո հեռացել եմ դատական նիստերի դահլիճից, քանի որ նման պայմաններում չէի կարող մասնակցել նշված քրեական գործի վարույթին:»:

<u>3.3. Վկաների ցուցմունքները</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին</u>

Թիվ ԿԳ116-Ա/ԿԳ-16063 կարգապահական գործը նախապատրաստող՝ Համլետ Ստեփանյանը 15.06.2016թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը նախապատրաստելու ընթացքում գործում առկա ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում վերջինս հանգել է այն հետևության, որ. «*Ղեկավավերլով Վարույթի կարգի 22-րդ կետի պահանջներով, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, սույն եզրակացության 5-րդ մասի 1-3-րդ կետերում շարադրված՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող էական փաստերի առկայության պայմաններում, հաշվի առնելով իրավակարգավորումներն առ այն, որ.*

1. *Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պետք է ենթարկվի դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվի դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին.*
2. *ՀՀ քր. Դատ. Օրի 70, 72-րդ հոդ. Համաձայն՝ փաստաբանները որպես պաշտպան մասնակցում են ՀՀ փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա: Պաշտպանից հրաժարվող անձի հայտարարությունն արտացոլվում է արձանագրության մեջ.*
3. *ՀՀ քր. դատ. օր-ի 73 հոդ. 5-րդ մասի 2 և 3-րդ կետերի համաձայն՝ Պաշտպանը պարտավոր է ենթարկվել նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը., գտնում եմ, որ փաստաբան Լիաննա Գասպարյանը կատարել է վարույթի հարուցման որոշման մեջ նշված վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետով նախատեսված արարքը. Առաց պատշաճ իրավական ընթացակարգի իրականացման՝ դատարանի կողմից անբաստանյալի՝ պաշտպանից հրաժարվելու մտադրության մասին հայտարարությունը քննարկելու, արձանագրելու, պաշտպանի՝ հետագա մասնակցության հարցը լուծելու, առանց դատարանի թույլտվության լքել է*

դատական նիստերի դահլիճը, ինչով անհարգալից վերաբերմունք է դրևորել դատարանի նկատմամբ:»:

Եզրակացության դեմ առարկություններ չեն ներկայացվել:

Սույն կարգապահական գործը և նախապատրաստողի եզրակացությունը 15.06.2016թ. հանձնվել է Խորհրդին:

Սույն կարգապահական գործը վարույթ է ընդունվել և նիստ է նշանակել 16.06.2016թ. որոշմամբ:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 20.10.2016թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 15.03.2016թ. թիվ 871/16-Ա որոշմամբ, թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործը հանձնվել է հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանին:
- Թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական նիստ է նշանակված եղել 16.03.2016թ. ժամը 15:00-ին:
- Դատական նիստի ժամանակ, ամբաստանյալ Վարգես Գասպարին չի տվել իր համաձայնությունը հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանին, թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով իր շահերի պաշտպանությունն իրականացնելու համար և հայտարարել է «*Ես հրաժարվում եմ, չեմ ցանկանում ինձ պաշտպանել, հեռացրեք այստեղից, չեմ ցանկանում, հեռացեք, հեռացեք, հեռացեք...*»՝ որից հետո Պատասխանողը հեռացել է դատական նիստերի դահլիճից, իսկ դատական նիստը շարունակվել է Պատասխանողի բացակայությամբ:
- Թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով հանրային պաշտպան Լիաննա Գասապարյանն, ամբաստանյալի համաձայնությունը չստանալու պայմաններում, ձեռք չի բերել պաշտպանի իրավավիճակ:

Նշված փաստերը հաստատվում են կողմերի բացատրություններով, ինչպես նաև գործի նյութերում առկա թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով 16.03.2016թ. ժամը 15:00-ին, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի ուսումնասիրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 21.07.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբան Լիաննա Գասպարյանի (արտոնագիր թիվ 1773, տրված՝ 14.06.2014թ.) նկատմամբ 2014-2016թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիաննա Գասպարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

16.03.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի թիվ 871/16-Ա որոշմամբ թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործը հանձնվել է հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանին:

Պատասխանողը թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով Դատարանի կողմից 16.03.2016թ. ժամը 15:00-ին նշանակված դատական նիստին պատշաճ ներկայացել է դատարան:

Այնուհետև, Դատարանն արձանագրելով, որ Դատարան է ներկայացել հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանը, վերջինիս խնդրել է ներկայանալ: Լիաննա Գասպարյանը ներկայացել է հետևյալ կերպ. *«Հարգելի դատարան, ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 16.03.2015թ. թիվ 871/16-Ա որոշմամբ ինձ է հանձնվել թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործը, սույն որոշմամբ նշանակվել եմ որպեսզի իրավաբանական օգնություն տրամադրեմ Վարդգես Գասպարիին, վերջինիս համաձայնությունից հետո, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:»*:

Այնուհետև, դատարանը արձանագրային որոշմամբ, հայտնել է հետևյալը՝ *«Դատարանը նման պայմաններում որոշում է Ձեզ ներգրավել, որպես ամբաստանյալի շահերի պաշտպան, քանի որ ամբաստանյալն ուներ պաշտպաններ, և պաշտպանները խոչընդոտում են դատական նիստերի բնականոն ընթացքին, ձախողում են դատական նիստերի ընթացքին, և դատարանին հնարավորություն չեն տալիս իրականացնելու արդարադատություն: Նման պայմաններում դատարանը որոշել էլ էր հանրային պաշտպան նշանանակելու մասին որոշում կայացնել ղեկավարվելով քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածով, և Դատարանը որոշում է համաձայն հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 16.03.2015թ. թիվ 871/16-Ա որոշման, Ձեզ ներգրավել որպես ամբաստանյալ Վարդգես Գասպարիի շահերի պաշտպան, առանց Գասպարիի կարծիքը հարցնելու...:»:*

Այնուհետև, Պատասխանողը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ. «*Նման պայմաններում ես չեմ կարող ներգրավել պաշտպան, քանի որ Վարդգես Գասպարին օրենքով նախատեսված համապատասխան ընթացակարգով իր համաձայնությունը չի տվել իմ կողմից, որպես իր պաշտպան մասնակցելու սույն քրեական գործին, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ձեռք չեմ բերել պաշտպանի կարգավիճակ և չեմ կարող մասնակցել սույն քրեական գործին....* »:

Սակայն Դատարանը, նշված հայտարարությունից հետո, հայտնել է, որ Դատարանի որոշումը չի քննարկվում, ինչից հետո, Պատասխանողը՝ շարունակելով իր

հայտարարությունը հայտնել է հետևյալը. «*Հարգելի դատարան, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համաձայն՝ պաշտպանի չներկայանալու և այդ նիստում նրան մեկ ուրիշ պաշտպանով փոխարինելը հնարավոր չլինելու դեպքում գործի քննությունը հետաձգվում է: Դատական նիստին չներկայացած պաշտպանի փոխարինումը թույլատրվում է միայն ամբաստանյալի համաձայնությամբ: Եթե ամբաստանյալի կողմից հրավիրված պաշտպանի մասնակցությունն անհնար է անընդմեջ երեք դատական նիստի չներկայանալու կամ տևական բուժում պահանջող հիվանդության կամ որևէ այլ հիմքով երկար ժամանակով դատական նիստին ներկայանալու անհնարինության պատճառով, դատարանը, հետաձգելով դատական քննությունը, իրավունք ունի ամբաստանյալին առաջարկել ընտրելու այլ պաշտպան, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ նշանակել նոր պաշտպան: Հարգելի Գասպարին ունի նշանակված պաշտպան Տիգրան Եգորյան, ով ընդհամենը մեկ դատական նիստի ընթացքում լքել է դատական նիստերի դահլիճը: Տվյալ դեպքում բացակայում է 304-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը, այն է՝ անընդմեջ երեք դատական նիստի չներկայանալու կամ տևական բուժում պահանջող հիվանդության կամ որևէ այլ հիմքով երկար ժամանակով դատական նիստին ներկայանալու անհնարինության պատճառը: Վարդգես Գասպարին ունի իր ընտրած պաշտպանի հնարավորություն Սահմանադրությամբ և Միջազգային պայմանագրերով սահմանված երաշխավորված իրավունք, հարգելի դատարան իմ կողմից դատական նիստերի մասնակցելը կկրի ձևական բնույթ:*»:

Նշված հայտարարությունից անմիջապես հետո, ամբաստանյալ Վարդգես Գասպարին բղավելով հայտարարել է. «*Ես հրաժարվում եմ, չեմ ցանկանում ինձ պաշտպանել, հեռացրեք այստեղից, չեմ ցանկանում, հեռացեք, հեռացեք, հեռացեք...*»՝ որից հետո, Պատասխանողը հեռացել է դատական նիստերի դահլիճից:

Դատարանը «ԴԱՏԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 16.03.2016թ. որոշման կայացման, որպես փաստական հիմք նշել է հետևյալը. «*Սույն քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. մարտի 16-ին, ժամը 15:00-ին նշանակված դատական նիստում հանրային պաշտպան գրասենյակի հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանը ներգրավվել է վարույթին, որպես ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպան:*

Դատական նիստի ժամանակ հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանն իր դատավարական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, հայտարարել է, որ ամբաստանյալ Վարդգես Լիվանի Գասպարիի համաձայնությունը չունենալու պատճառով նրա պաշտպանությունը ստանձնել չի կարող, որից հետո չենթարկվելով նախագահող դատավորի օրինական կարգադրություններին՝ լքել է դատական նիստերի դահլիճն, ինչով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:»:

Այսինքն՝ Դատարանը գտել է, որ Պատասխանողի կողմից վերը նշված դատական նիստին, առանց նախագահող դատավորի թույլտվության դատական նիստերի դահլիճից հեռանալու վարքագծի դրսևորումը, անհարգալից վերաբերմունք է Դատարանի նկատմամբ:

Խորհուրդը արձանագրում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինը անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային*

պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ *քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումի կամ որոշման հիման վրա կամ սույն օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում քաղաքացու դիմումի հիման վրա որոշում է կայացնում հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշումը կամ դիմումը բավարարելու և գործը հանրային պաշտպանին հանձնելու մասին կամ հանրային պաշտպանություն իրականացնելու դիմումը մերժելու մասին, երբ այն նախատեսված չէ սույն օրենքի 41-րդ հոդվածով:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունն ստանձնելու պահից:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:*

Վերը նշված նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, ստացվում է, որ հանրային պաշտպան տրամադրվում է, միայն վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, այլ կերպ ասած հանրային պաշտպանի գրասենյակն ի կատարումն քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման, պարտավոր է քրեական գործը հանձնել հանրային պաշտպանին, ինչը ևս սույն դեպքում տեղի ունցել է, քանի որ Դատարանի հանրային պաշտպան ներգարվելու մասին որոշման, իսկ այնուհետև Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 15.03.2016թ. թիվ 871/16-Ա որոշման հիման վրա, թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով ամբաստանյալ Վարգես Գասպարիի պաշտպանությունը հանձնվել է հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանին: Սակայն, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի փաստաբանն, այդ թվում հանրային պաշտպանը, քրեական գործով պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում միայն այն ժամանակ, երբ ստանում է կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությունը:

Նշված դեպքում, որպեսզի հանրային պաշտպան Լիաննա Գասպարյանը, ստանձներ ամբաստանյալ Վարդգես Գասպարիի շահերի պաշտպանությունն, անհրաժեշտ էր, վերջինիս համաձայնությունն, ինչը սակայն այդպես էլ տեղի չի ունցել, որն էլ պատճառ է հանդիսացել, որպիսի Պատասխանողը հեռանա նիստի դահլիճից:

Խորհուրդն արձանագրում է, որ Վարդգեզ Գասպարին Լիաննա Գասպարյանի ներկայությամբ սեփական նախաձեռնությամբ, կամավոր հայտարարել է, որ չի տալիս իր համաձայնությունը, որ վերջինս ներգրավվի որպես իր պաշտպան:

Իսկ ինչ վերաբերում է պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերին, ապա Խորհուրդն արձանագրում է, որ նշված դեպքերը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով և սույն կարգապահական վարույթի շրջանակներում քննարկվող գործով առկա չէ նշված հոդվածով սահմանված այն հիմքերից առնվազն մեկը, համաձայն որի դատարանը իրավասու էր Վարդգես Գասպարիի համաձայնության բացակայության պայմաններում՝ Պատասխանողին ներգրավել, որպես Վարդգես Գասպարիի պաշտպան:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատասխանողի հեռանալուց անմիջապես հետ դատարանը շարունակել է տվյալ գործի քննությունը, որպիսի հանգամանքը ևս հաստատում է, որ բացակայել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում պաշտպանի մասնակցությունը պարտադիր էր, ինչպես նաև բացակայում էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ և 72-րդ հոդվածներով նախատեսված պաշտպանից հրաժարումը չնդունելու հիմքերը:

Վերոնշվածը հաշվի առնելով, Խորհուրդը գտնում է, որ հանրային պաշտապան Լիաննա Գասապրյանի կողմից, թույլ չի տրվել Կանոնագրիք 4.1 կետով սահմանված խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Լիաննա Գասպարյանի (արտոնագիր 1773) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16063 կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:***
2. ***Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան